

**1.3. ՉՆԵՐ և սակագներ**

**2001թ. փետրվարին զների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների**

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական զների ինդեքս <sup>1)</sup>	Արդյունաբերողների արտադրանքի զների ինդեքս <sup>2)</sup>	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում <sup>3)</sup>	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup>	Գյուղատնտեսական մթերքների իրացման զների ինդեքս <sup>5)</sup>	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման զների ինդեքս <sup>6)</sup>
Հունվար	104.6	100.7	99.6	99.7	105.1	102.2
Փետրվար	99.1	102.4	100.0	99.8	99.5	98.3
Փետրվարը 2000թ. դեկտեմբերի համեմատ	103.6	101.7*)	99.5	99.5	104.2*)	100.3*)
2001թ. հունվար-փետրվարը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ	102.5	100.8	101.4	105.4	108.9	107.6

\*) 2001թ. փետրվարի և 2000թ. դեկտեմբերի փաստացի զներով հաշված:

<sup>1)</sup> Ըստ գործող մեթոդաբանության, 77-ում զների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

<sup>2)</sup> Գների դիտարկումը կատարվում է 177 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 624 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

<sup>3)</sup> Ըստ 77 քաղաքաշինության նախարարության տվյալների:

<sup>4)</sup> Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

<sup>5)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման զների և ծավալների հետազոտման տվյալների:


<sup>6)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման զների և ծավալների հետազոտման տվյալների:

**Սպառողական զներ:** ՀՀ սպառողական շուկայում 2001թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ գրանցված բարձր գնաճից հետո, փետրվարին արձանագրվել է զների 0.9% նվազում, ինչը 0.8 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա փետրվարին գրանցված ցուցանիշից (0.1%): Հանրապետությունում արձանագրված գնային փոփոխությունները մեծապես պայմանավորված են պարենային ապրանքների գնային փոփոխությամբ՝ կապված պարենային որոշ ապրանքատեսակների սեզոնայնության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության հետ:

Սպառողական զների ինդեքսը 2001թ. փետրվարին 2000թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 103.6%, ինչը 1.6 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածում արձանագրված զների ամփոփ ինդեքսից (102.0%): Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) զների ինդեքսը նշված ժամանակահատվածում կազմել է 105.2, ոչ պարենային ապրանքներինը՝ 99.8, իսկ ծառայությունների սակագներինը՝ 100.4%:


2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) զների նվազումը կազմել է 1.2%, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.3%, իսկ ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Սպառողական գների հավելաճը 1995-2001թթ. հունվար- փետրվարին  
նախորդ ամսվա համեմատ , տոկոսներով



2001թ. փետրվարին նախորդ տարվա փետրվարի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 102.0%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 101.9%, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.3%, ծառայությունների սակագներինը՝ 102.0%, իսկ հունվար-փետրվարին 2000թ. հունվար-փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 102.5%, 102.7, 102.1 և 102.1%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2001թ. հունվար-փետրվարին, տոկոսներով  
(նախորդ ամիսը = 100)



**Արտարժույթային շուկա:** 2001թ. փետրվարին հունվարի համեմատ թե՛ սպառողական, թե՛ արտարժույթի շուկայում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 0.9% և 0.2% նվազում՝ 2000թ. նույն ժամանակահատվածում գրանցված 0.1 և 0.2% հավելաճի դիմաց: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2001թ. փետրվարին կազմել է 552.17 դրամ, ինչը 4.6%-ով գերազանցել է 2000թ. փետրվարի համապատասխան ցուցանիշը (527.86 դրամ):

**Պարենային ապրանքների գներ:** Պարենային ապրանքների շուկայում 2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է գների 1.5% նվազում, ինչը հիմնականում պայմանավորված է մրգի (5.0%), բանջարեղենի և կարտոֆիլի (6.6%) ապրանքախմբերում գրանցված գների նվազմամբ: Հանրապետությունում դիտարկված բնակավայրերից Երևանում, Վաղարշապատում և Հրազդանում (Չարենցավանում) գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի գների նկատելի նվազում՝ կազմելով համապատասխանաբար 12.1%, 10.5% և 4.2%: Դիտարկված մյուս 7 բնակավայրերում բանջարեղենի և կարտոֆիլի գներն աճել են 3.6-15.8%-ով (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է Եղեգնաձորում): Նշված ժամանակահատվածում նկատելիորեն նվազել են լուլիկի (29.9%), վարունգի (25.1%), գլուխ սոխի (11.1%), կաղամբի (8.6%), ճակնդեղի (4.6%), գազարի (2.9%), կարտոֆիլի (1.1%) գները: Չնայած նշված ապրանքատեսակների գների փետրվարին

արձանագրված նվազմանը, 2000թ. դեկտեմբերի համեմատ պահպանվել է լուրիկի (3.2 անգամ), վարունգի (1.8), գազարի (1.5), կաղամբի (1.4), ճակնդեղի (1.5), կարտոֆիլի (1.2 անգամ) բարձր գնաճ:

2001թ. փետրվարին 2000թ. դեկտեմբերի համեմատ մրգի ապրանքախմբում գրանցվել է 22.8% գնաճ, ինչը 3.0 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նույն ցուցանիշը (19.8%): Հարկ է նշել, որ մրգի գնաճը, ինչպես ընթացիկ տարվա, այնպես էլ 2000թ. նշված ժամանակահատվածում ամբողջությամբ բաժին է ընկնում հունվարին (2001թ. հունվարին՝ 29.3%, 2000թ. հունվարին՝ 21.3%): 2001թ. փետրվարին արձանագրված մրգի գների նվազմանը մեծապես նպաստել է արևադարձային պտուղների գնանկումը: Նշված ժամանակահատվածում գրանցվել է կիտրոնի (25.1%), ադամաթզի (12.3%), նարնջի (9.7%), մանդարինի (9.4%) գների նվազում: Խնձորի և տանձի գները նվազել են համապատասխանաբար 5.1% և 4.6%-ով: Հանրապետության դիտարկված բնակավայրերից Երևանում, Գյումրիում, Հրազդանում (Չարենցավանում) և Դիլիջանում գրանցվել է մրգի գների 14.2-0.3% նվազում (նվազման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Գյումրիում): Հետազոտված մյուս 6 բնակավայրերում արձանագրվել է մրգի 1.7-17.3% գնաճ:

2001թ. հունվարին հանրապետությունում գրանցված ձվի 11.5% գնաճին փետրվարին հաջորդել է 7.0% գնանկում, ինչը դիտարկված բնակավայրերից 6-ում ձվի գնի 9.0-1.8% նվազման արդյունք է: Ձվի գնաճ գրանցվել է միայն Մարտունիում կազմելով 1.4%, իսկ մյուս 3 հետազոտվող բնակավայրերում պահպանվել է ձվի գնի նախորդ ամսվա մակարդակը: Ընթացիկ ամսում գների նվազման միտում է նկատվել նաև հրուշակեղենի, կենդանական և բուսական յուղի, կաթնամթերքի, շաքարավազի, սուրճի, թեյի, կակաոյի, ոչ ոգելից խմիչքի ապրանքախմբերում, որոնց գների նվազումը կազմել է 0.9-0.1%:

Չկնամթերքի ապրանքախմբում հունվարին արձանագրված գների 22.7% նվազմանը փետրվարին հաջորդել է 4.7% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորված է թարմ (սիգ) ձկան 5.4% գնաճով: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 5-ում արձանագրվել է ձկնամթերքի 4.0-25.8% գնաճ (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Մարտունիում): Դիլիջանում և Եղեգնաձորում պահպանվել է ձկնամթերքի գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 3 բնակավայրերում արձանագրվել է գների 3.8-0.1% նվազում:

2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում նկատվել է մսամթերքի 0.5% գնաճ, ընդ որում ոչխարի, խոզի, տավարի մսի գներն աճել են 3.5%, 1.6% և 1.2%-ով, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 13.8%, 14.5% և 13.2%: Դիտարկված բնակավայրերից 8-ում մսամթերքի գներն աճել են 1.0-8.0%-ով (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Վաղարշապատում), իսկ Երևանում և Վանաձորում մսամթերքի գները նվազել են համապատասխանաբար 0.5% և 1.9%-ով:

2001թ. փետրվարին, ինչպես և նախորդ ամսում, ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում արձանագրվել է գների 0.1% նվազում, ընդ որում ոգելից խմիչքի գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ ծխախոտի գինը նվազել է 0.1%-ով:

**Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի**

(տոկոսներով)

	<b>2001 թ վ ա կ ա մ ի</b>			
	հունվարը	փետրվարը	փետրվարը	հունվար-փետր-
	2000թ. դեկտեմբերի նկատմամբ	2000թ. դեկտեմբերի նկատմամբ	2001թ. հունվարի նկատմամբ	վարը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ
<b>Պարենային ապրանքներ</b>				
(ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	106.5	105.2	98.8	102.7
<b>Պարենային ապրանքներ</b>	107.9	106.3	98.5	103.2
հացամթերք	100.2	100.2	100.0	95.8
մսամթերք	106.6	107.2	100.5	101.2
ձկնամթերք	77.3	80.9	104.7	116.2
կաթնամթերք	101.8	101.2	99.4	102.1
ծու	111.5	103.7	93.0	97.2

	<b>2001 թ վ ա կ ա ն ի</b>			
	հունվարը 2000թ. դեկտեմբերի նկատմամբ	փետրվարը 2001թ. հունվարի նկատմամբ	փետրվարը 2001թ. հունվարի նկատմամբ	հունվար-փետր- վարը 2000թ. հուն- վար-փետրվարի նկատմամբ
կենդանական և բուսական յուղ	101.0	100.2	99.1	94.7
միրգ	129.3	122.8	95.0	108.5
բանջարեղեն և կարտոֆիլ	153.6	143.4	93.4	137.2
չաքարավազ	99.7	99.3	99.6	118.9
սուրճ, թեյ, կակաո	99.7	99.5	99.8	91.7
հրուշակեղեն	100.4	99.5	99.1	97.5
ոչ ոգելից խմիչք	100.1	100.0	99.9	97.9
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	99.9	99.8	99.9	100.2

**Ոչ պարենային ապրանքների գներ.** Ոչ պարենային ապրանքների շուկայում 2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ գների ընդհանուր մակարդակի 0.3% նվազումը հիմնականում պայմանավորված է հետազոտվող ոչ պարենային ապրանքախմբերից մեծ մասի գների նվազմամբ: Այսպես, փետրվարին գների նվազում է արձանագրվել վառելիքի (կապված հեղուկ գազի 9.6% և նավթի 6.3% գների նվազման հետ), տեքստիլեղենի, կահույքի, գորգեղենի, լվացամիջոցների, անձնապիտո, ոսկերչական ապրանքների, կենցաղային էլեկտրաապրանքների, մշակույթի ապրանքների, շինանյութերի ապրանքախմբերում կազմելով 6.4-0.1%: Գրենական պիտույքների, հագուստի և կտորեղենի, կոշիկեղենի գները մնացել են նախորդ ամսվա գների մակարդակին, իսկ խոհանոցային սպասքի, զեղահարդարման, այգեգործական ապրանքների գներն աճել են 0.1-0.3%-ով: Դեղամիջոցների գներն աճել են 2.6%-ով երկու ամսվա ընդհանուր գնաճը կազմելով 14.5%:

2001թ. փետրվարին շարունակվել է հունվարին գրանցված բենզինի և դիզելային վառելիքի գների նվազման միտումը: Փետրվարին բենզինի միջին համրապետական գինը նվազել է 0.6%-ով, իսկ դիզելային վառելիքինը՝ 9.3%-ով: 2001թ. փետրվարին 2000թ. դեկտեմբերի համեմատ բենզինի գնի ընդհանուր նվազումը կազմել է 6.3%, դիզելային վառելիքինը՝ 9.7%:

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները**  
(տոկոսներով)

	<b>2001 թ վ ա կ ա ն ի</b>			
	հունվարը 2000թ. դեկտեմբերի նկատմամբ	փետրվարը 2001թ. հունվարի նկատմամբ	փետրվարը 2001թ. հունվարի նկատմամբ	հունվար-փետր- վարը 2000թ. հուն- վար-փետրվարի նկատմամբ
<b>Ոչ պարենային ապրանքներ</b>	100.1	99.8	99.7	102.1
<i>այդ թվում՝</i>				
հագուստ և կտորեղեն	100.0	100.0	100.0	97.1
վառելիք	98.3	92.0	93.6	104.3
կահույք	99.5	99.1	99.6	101.6
գորգեղեն	99.2	98.8	99.7	102.7
տեքստիլեղեն	100.6	99.8	99.2	105.6
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.7	99.6	99.9	100.5
խոհանոցային սպասք	99.5	99.6	100.1	98.8
լվացամիջոցներ	100.2	100.0	99.8	100.5
շինանյութեր	99.7	99.6	99.9	104.2
այգեգործական ապրանքներ	100.0	100.1	100.1	98.5
դեղամիջոցներ	111.5	114.5	102.6	106.3
անձնական օգտագործման մեքենա- ներ և բենզին	95.5	93.9	98.4	114.6
մշակույթի ապրանքներ	99.2	99.1	99.9	96.3
գրենական պիտույքներ	100.0	99.9	100.0	102.6
զեղահարդարման ապրանքներ	99.9	100.2	100.3	95.5
ոսկերչական ապրանքներ	99.4	99.3	99.9	96.4
անձնապիտո ապրանքներ	99.7	99.4	99.7	100.4

**Ծառայությունների սակագներ:** 2001թ. փետրվարին հանրապետությունում արձանագրված ծառայությունների սակագների անփոփոխ ընդհանուր մակարդակի պայմաններում որոշ ծառայությունների գծով գրանցվել են սակագների փոփոխություններ թե՛ աճման, թե՛ նվազման միտումով: Այսպես, կապի ծառայությունների սակագներն ընթացիկ ամսում աճել են 0.6%-ով, ինչը փոստային առաքումների վրա հունվարի 15-ից ավելացված արժեքի հարկի մասին օրենքի կիրառման արդյունք է: Դրանով պայմանավորված, փոստային ծառայությունների սակագների հավելաճը փետրվարին հունվարի համեմատ կազմել է 12.5%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 20.0%: Սակագների աճ արձանագրվել է նաև կրթության համակարգի և հանգստի կազմակերպման ծառայությունների գծով՝ կազմելով 0.1%: Նշված ժամանակահատվածում 0.4%-ով նվազել են տրանսպորտի ծառայությունների սակագները՝ կապված միջքաղաքային տրանսպորտի սակագների 1.1% նվազման հետ (վերջինս պայմանավորված է օդային ուղևորափոխադրումների սակագների 1.6% նվազմամբ): Սակագների նվազում գրանցվել է նաև հանրային սննդի և մշակույթի ծառայությունների ոլորտում կազմելով 0.1%, իսկ կենցաղային, բուժսպասարկման, բնակարանային-կոմունալ, իրավական ու բանկային ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

(տոկոսներով)

	<b>2001 թ վ ա կ ա ն ի</b>			
	հունվարը	փետրվարը	փետրվարը	հունվար-փետրվարը
	2000թ. դեկտեմբերի նկատմամբ	2000թ. դեկտեմբերի նկատմամբ	2001թ. հունվարի նկատմամբ	2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ
<b>Ծառայություններ, ընդամենը</b>	100.4	100.4	100.0	102.1
<i>այդ թվում՝</i>				
կենցաղային	102.4	102.4	100.0	105.7
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.0	100.1
բուժսպասարկման	99.2	99.1	100.0	99.9
տրանսպորտի	99.7	99.3	99.6	102.8
կապի	99.6	100.2	100.6	102.5
մշակույթի	99.1	99.0	99.9	104.6
կրթության համակարգի	99.8	99.9	100.1	102.6
հանգստի կազմակերպման	100.8	100.9	100.1	103.6
հանրային սննդի	100.7	100.6	99.9	100.8
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	104.0

**Սպառողական զների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** 2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ դիտարկված բնակավայրերից 4-ում սպառողական զների մակարդակը նվազել է 1.7-0.1%-ով: Նվազման անենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք.Երևանում: Ունենալով մեծ տեսակարար կշիռ հետազոտված բնակավայրերի մեջ, ք.Երևանում սպառողական զների փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողել հանրապետությանում զների ընդհանուր մակարդակի վրա՝ նվազման միտումով: Դիտարկված մյուս 6 բնակավայրերում գրանցվել է սպառողական զների 0.1-1.8% գնաճ:

Դիտարկված բնակավայրերից 4-ում 2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է պարենային ապրանքների զների 2.8-0.1% նվազում (զների նվազման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք.Երևանում), իսկ մյուս 6-ում՝ 0.4-2.9% գնաճ:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2001թ. փետրվարի 28-ի դրությամբ.**

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարկոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
<b>ՀՀ, միջինը</b>	1058	1276	1464	530	425	253	152	270	174	301
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1050	1325	1450	543	423	255	153	269	197	304
Գյումրի	1075	1175	1417	527	450	257	177	283	153	425
Վանաձոր	1075	1300	1500	520	405	247	155	215	105	280
Վաղարշապատ	1200	1300	1450	500	400	240	150	250	150	350
Թալին	1100	1200	1450	500	400	250	150	350	200	250
Դիլիջան	1000	1200	1400	500	425	255	190	250	175	250
Հրազդան, Չարենցավան	1100	1200	1500	550	400	250	140	250	140	200
Եղեգնաձոր	1100	1200	1600	420	450	250	150	300	220	250
Մարտունի	900	1100	1500	500	500	250	105	300	70	350
Կապան	1020	1100	1680	500	450	266	138	350	200	190

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի հաշվարկով) 2001թ. փետրվարի 28-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5903 դրամ, ինչը 8 դրամով կամ 0.1%-ով ավել է նույնամուսնի ապրանքատեսակների հունվարի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (5895 դրամ): Փետրվարի 28-ին հունվարի 30-ի համեմատ վերոհիշյալ պարենային ապրանքատեսակներից մեծ մասի գները նվազել են 3.0-0.1%-ով: Դրա հետ մեկտեղ, նշված ժամանակահատվածում նկատելիորեն ավել են կաղամբի (14.3%), խնձորի (6.0%) և տավարի մսի (3.2%) գները: Դիտարկված բնակավայրերից 6-ում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ընդհանուր արժեքը 4.3-0.2 տոկոսային կետով ցածր է հունվարի 30-ի համապատասխան ցուցանիշից, իսկ մյուս 4-ում գրանցվել է 0.2-1.7% գնաճ: Փետրվարի 28-ի դրությամբ, նշված ապրանքների ձեռքբերման ամենաբարձր արժեքն արձանագրվել է Վաղարշապատում (5990 դրամ), իսկ ամենացածրը՝ Մարտունիում (5575 դրամ):

2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում դիտարկված բնակավայրերից 4-ում գրանցվել է ոչ պարենային ապրանքների գների 0.8-0.1% նվազում (նվազման համեմատաբար բարձր ցուցանիշը գրանցվել է Վանաձորում): Դիլիջանում պահպանվել է ոչ պարենային ապրանքների գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 5 բնակավայրերում գրանցվել է 0.3-0.6% գնաճ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2001թ. փետրվարին հետազոտված բնակավայրերից 6-ում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 4-ում գրանցվել է սակագների 0.2-0.1% նվազում:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2001թ. փետրվարին 2000թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբերի**

(տոկոսներով)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
<b>ՀՀ, ընդամենը</b>	103.6	104.2	105.2	106.3	99.8	100.4
<i>այդ թվում՝</i>						
Երևան	103.6	104.1	105.1	106.1	99.8	100.7
Գյումրի	103.8	104.4	105.7	106.9	98.8	99.6
Վանաձոր	104.9	105.8	107.3	108.9	98.8	100.0
Վաղարշապատ	102.9	103.4	104.0	104.9	100.6	99.9
Թալին	104.4	105.2	106.5	107.9	99.4	99.8

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
Դիլիջան	104.1	104.9	105.9	107.3	100.0	99.8
Հրազդան, Չարենցավան	103.2	103.7	104.4	105.4	100.6	100.0
Եղեգնաձոր	104.7	105.4	106.6	108.3	100.1	100.3
Մարտունի	102.8	103.3	104.0	105.4	99.9	100.0
Կապան	102.7	103.2	103.8	104.6	100.4	99.6

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս:** 2001թ. փետրվարին 2000թ. դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը կազմել է 101.7%, ինչը 0.8 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ժամակահատվածի նույն ցուցանիշը (100.9%):

2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 2.4%, ինչը հիմնականում պայմանավորված է այլ արդյունաբերական (ոսկերչական արդյունաբերությունում) (33.3%), հրատարակչական գործերի արտադրությունում (4.9%) և թեթև արդյունաբերությունում (2.5%) թողարկած արտադրանքի գնաճով: Նշված ժամանակահատվածում գնաճ է արձանագրվել նաև զուևավոր մետալուրգիայի, անտառային, փայտամշակման և թղթի-ցելյուլոզի, էլեկտրաէներգետիկայի, շինանյութերի, սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի) ճյուղերում կազմելով 0.3-2.3%: Դրան զուգընթաց, մեքենաշինության և քիմիական, նավթաքիմիական ու քիմիադեղագործական արդյունաբերությունում գրանցվել է թողարկած արտադրանքի գների համապատասխանաբար 4.9% և 1.2% նվազում:

2001թ. փետրվարին նախորդ տարվա փետրվարի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 101.9%:

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքս:** 2001թ. փետրվարին 2000թ. դեկտեմբերի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 99.5%՝ 2000թ. համապատասխան ժամանակահատվածի 101.9%-ի դիմաց: Ծառայության այս ոլորտում փետրվարին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է սակագների ընդհանուր նակարդակի 0.2% նվազում, ինչին մեծապես նպաստել է է ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 4.2% նվազումը (վերջինս պայմանավորված է բենզինի և դիզելային վառելիքի գնի նվազմամբ): Նշված ժամանակահատվածում նվազել են նաև օդային (0.3%) և խողովակաշարային (0.2%) տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները, իսկ երկաթուղային տրանսպորտում արձանագրվել է սակագների 0.9% հավելաճ:

2001թ. փետրվարին նախորդ տարվա փետրվարի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 104.2%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 105.0%, ավտոմոբիլայինով՝ 101.7%, օդայինով՝ 98.9%, խողովակաշարային տրանսպորտով՝ 104.5%:

**Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս:** 2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գները նվազել են 0.5%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի 3.2% նվազման դիմաց: Շուկայում և մթերող կազմակերպություններին իրացված գյուղմթերքի գնանկումը կազմել է համապատասխանաբար 1.8% և 1.3%, իսկ անհատ քաղաքացիների գծով գրանցվել է իրացման 0.1% գնաճ: Հանրապետության հետազոտված մարզերից 5-ում գյուղմթերքների իրացման գները նվազել են 1.9-0.7%-ով, իսկ մյուս 5-ում գրանցվել է 0.4-5.8% գնաճ:

Հանրապետությունում 2001թ. հունվարին արձանագրված բուսաբուծական մթերքների 9.7% իրացման գնաճին փետրվարին հաջորդել է 2.6% գնանկում, ընդ որում շուկայում և

1. ԻՐԱԿԱՆ ՅԱՏՎԱԾ

անհատ քաղաքացիներին իրացված բուսաբուծական մթերքների գների նվազումը կազմել է համապատասխանաբար 3.6% և 2.4%, իսկ մթերող կազմակերպությունների գծով գրանցվել է 1.5% գնանկում:

Բուսաբուծական մթերքների իրացման գների նվազմանը մեծապես նպաստել են մրգի (6.4%), կերային մշակաբույսերի (9.2%) գների նվազումը: Ընթացիկ ամսում նվազել են նաև բանջարեղենի և մեղրի գները՝ կազմելով 0.5% և 0.7%, իսկ հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի ապրանքախմբերում գրանցվել է գնաճ՝ կազմելով համապատասխանաբար 9.1% և 2.0%:

Հանրապետության դիտարկված մարզերից 7-ում 2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է բուսաբուծական մթերքի իրացման 0.1-6.3% գնաճ (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է Արմավիրի մարզում): Արագածոտնում պահպանվել է բուսաբուծական մթերքների իրացման գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ Գեղարքունիքում և Կոտայքում արձանագրվել է համապատասխանաբար 5.7% և 2.3% գնաճ:

**Գյուղատնտեսական մթերքների իրացման միջին գները  
Հայաստանի Հանրապետությունում 1998-2001թթ. փետրվարին**

(դրամով)

	Չափի միավորը	1998	1999	2000	2001
Ցորեն	կգ	163	99	101	106
Գարի	կգ	131	99	78	90
Լոբի	կգ	262	354	315	425
Կարտոֆիլ	կգ	124	97	80	113
Կաղամբ	կգ	71	53	27	86
Գազար	կգ	72	54	41	52
Գլուխ սոխ	կգ	183	141	55	218
Միամյա խոտեր	կգ	27	23	23	34
Բազմամյա խոտեր	կգ	33	27	20	27
Խնձոր	կգ	153	133	99	125
Տանձ	կգ	209	183	131	127
Ընկույզ (կեղևով)	կգ	680	700	641	803
Մեղր	կգ	2339	2562	2437	2674
Միս տավարի	կգ	864	823	803	819
Ոչխարի	կգ	839	845	790	804
Խոզի	կգ	1442	770	823	1095
Կաթ	լ	148	113	126	110
Մածուն	լ	191	187	172	182
Պանիր (յուղոտ)	կգ	928	917	880	856
Զուլ	հատ	55	49	48	45

2001թ. փետրվարին հանրապետությունում անասնապահական մթերքի իրացման գներն աճել են 0.6%-ով, ընդ որում անհատ քաղաքացիներին իրացված անասնապահական մթերքի գնաճը կազմել է 1.2%, իսկ մթերող կազմակերպություններում և շուկայում իրացման գները նվազել են համապատասխանաբար 2.4% և 0.2%-ով: Անասնապահական մթերքի գնաճին մեծապես նպաստել է սառմթերքի (2.7%) և բրդի (14.3%) իրացման գնաճը: Կաթնամթերքի և ձվի գները նշված ժամանակահատվածում նվազել են համապատասխանաբար 2.8% և 3.2%-ով: Փետրվարին նախորդ ամսվա համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 7-ում անասնապահական մթերքի իրացման գներն աճել են 0.1-8.9%-ով (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արարատում), իսկ մյուս 3-ում արձանագրվել է գների 2.9-1.6% նվազում:

2001թ. փետրվարին նախորդ տարվա փետրվարի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը կազմել է 109.9%, այդ թվում բուսաբուծական մթերքինը՝ 125.5%, անասնապահական մթերքինը՝ 103.5%:

2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գները նվազել են 1.7%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի



0.5% նվազման դիմաց: Հարկ է նշել, որ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների նվազումը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսության վճարովի ծառայությունների սակագների (31.1%) և գյուղատնտեսական մանր գործիքների (10.9%), մեքենա-սարքավորումների և դրանց պահեստամասերի (5.0%), պարարտանյութերի (2.3%) գնման գների նվազմամբ: Նշված ժամանակահատվածում նվազել են նաև էներգիայի ու քսայուղերի, անասնակերի գնման գները՝ կազմելով համապատասխանաբար 1.1% և 0.2%: Միաժամանակ, անասունների, շինանյութերի, սերմացուների ու տնկիների ապրանքախմբերում արձանագրվել է գնման 6.3-7.4% գնաճ, իսկ բույսերի պաշտպանության միջոցների գնման գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

Հանրապետության հետազոտված մարզերից 6-ում 2001թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է գնման գների 2.3-0.6% նվազում (նվազման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Շիրակում): Արագածոտնում պահպանվել է գնման գների հունվարի մակարդակը, իսկ մյուս 3 մարզերում արձանագրվել է 0.1-3.5% գնաճ: